

ՎԱՀԱՆ Ա ՍՅՈՒՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

X դարում միասնական քաղաքական համակարգի բացակայության և ավատական իշխանությունների մասնատվածության պայմաններում առանձնահատուկ կարևորություն էր ստանում Հայ եկեղեցու նվիրապետության միասնության և դավանանքային նույնության խնդիրը: Գնահատելով Հայ եկեղեցու նշանակալի դերակատարությունը երկրի ներքին ու արտաքին քաղաքականության հարցերում՝ Հայաստանի ախոյանները փորձում էին միջամտել նրա գործերին, թելադրել իրենց շահերից բխող քաղաքական կողմնորոշում: Ներքին և արտաքին մարտահրավերներով հարուստ այսպիսի ժամանակաշրջանում Վահան Ա Սյունեցին ստանձնեց Հայոց կաթողիկոսության գահը:

Հայ պատմագրության մեջ Վահան Սյունեցուն տրվել են իրարամերժ գնահատականներ՝ մեծարանքի խոսքերից ընդհուպ հերձվածող: Նրան դրվատանքի խոսքերի են արժանացրել X դարի Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին¹, Ներսես Լամբրոնացին², Սմբատ Սպարապետը³, Ստ. Օրբելյանը⁴, «Յայսմավորքի» հեղինակները⁵: Մատթեոս Ուռհայեցին նրան բնութագրում է որպես «զլան ի բնաւիցս զերանելին զՎահան»⁶: Սյուս կողմից Հայ եկեղեցու ծիսադավանանքային հարցերում պահպանողական դիրքորոշում ունեցող հայրերը նրան մեղադրել են քաղկեդոնականությանը հարելու և պատկերապաշտությունը հովանավորելու մեջ⁷:

¹ Տե՛ս «Զխաչակրօն եւ զսրբասնունդ տէր Վահան» («Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Ադուանից», Արարատ, 1897, թիվ Գ, էջ 141):

² Տե՛ս «Տն. Ներսեսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք», Վենետիկ, 1838, էջ 157:

³ Տե՛ս «Այր սուրբ եւ առաքինի» («Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», Փարիզ, 1859, էջ 39):

⁴ Տե՛ս «Ընտրեալ զՎահան վասն առաւել սրբութեանն և իմաստութեանն» («Ստեփաննոսի Սինեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, գլ. ԽԴ, էջ 175, գլ. ԾԲ, էջ 211):

⁵ Տե՛ս «Վահան էր ուղղափառ և իմաստուն հայրապետ հայոց» («Բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1769, հ. Բ, էջ 352):

⁶ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 33:

⁷ Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմութիւն Տիեզերական / Մատենագիրք հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Եր., 2011, հանդէս Գ, գլ. Ը, էջ 756: **Մամուլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթնոսյանի, Եր., 2014, էջ 175: «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 89: **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 87:

Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Վահանը Սյունյաց նահանգի Բաղք գավառի⁸ իշխան Ջևանշեր Բ-ի (911-958) որդին և Չագիկ Գ-ի⁹ թոռն է: Որոշ հեղինակների կողմից հորջորջվել է նաև Վահանիկ¹⁰: Նա կրթություն է ստացել իր հորեղբայր Վահանի հիմնադրած Վահանավանքի¹¹ դպրոցում, որտեղ «սնեալ և ուսեալ ի մանկութենէ, վարժեալ աստուածային իմաստիքն ի սոյն տան»¹²: Այստեղ Վահանը ստանում է քահանայական կարգ, իսկ ավելի ուշ դառնում Վահանավանքի միաբանության վանահայր: Ստանձնելով վանքի առաջնորդի պաշտոնը՝ Վահան Ջևանշերյանը ծավալում է հոգևոր-մշակութային արդյունավետ գործունեություն: Դրան զուգահեռ ձեռնամուխ է լինում շինարարական նշանակալի աշխատանքների՝ հարստացնելով վանքի շինությունները հոգևոր բովանդակությամբ. «Սա յաւել բազում շինութիւնս և զարդարեաց զվանսն հանդիսական կարգօք, շինէ զմեծ աղօթարանն ի դրան եկեղեցոյն, վիմարդեան մահարձանօք, յորում հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք և թագուհիք Աղուանից և Բաղաց, և բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս: Շինէ և գեղեցիկ յօրինուածով զգաւիթ եկեղեցոյն մեծամեծ քերածոյ վիմօք երեսուն կանգնոց (մեկ կանգունը 56-58 սմ է) չափ, կանգնէ կամար ի դրան վանիցն և ի վերայ (նորա) երկու խորան յանուն Պետրոսի և Պօղոսի սուրբ առաքելոցն»¹³:

⁸ Բաղքը Սյունիքի 9-րդ գավառն է, համապատասխանում է ներկայիս Կապանի տարածքին (տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Եր., 1963, էջ 44): X-XII դարերում կոչվել է «Բաղաց աշխարհ» ընդգրկելով նաև Ձորք, Կովսական, Արևիք գավառները:

⁹ Չագիկ Գ-ն՝ որպես Բաղքի իշխան, հիշատակվում է X դարի առաջին քառորդին (911-925): Չագիկին հաջորդել է Ջևանշեր Բ-ի որդին (911-958). «Եւ պայազատէր զտերութիւն նորա Ջևանշեր բազում ժամանակօք» («Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԼԷ, էջ 146, Դ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 273): Սյունիքի պատմության հեղինակ Հ. Ութմազյանի կարծիքով՝ ապագա կաթողիկոս Վահան Սյունեցին Բաղաց իշխան Չագիկ Բ-ի (895-906) երկու որդիներից մեկի՝ Ջևանշեր Ա-ի որդին է (տե՛ս Հ. Ութմազյան, Սյունիքը IX-X դարերում, Եր., 1958, էջ 326):

¹⁰ Տե՛ս Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, հանդես Գ, գլ. Ը, էջ 756: Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 176: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 87: Փաղաքական վերջածանցով Վահանիկ անվանումը երբեմն ընկալվել է որպես վիրավորական շեշտադրում: Այս տեսակետի համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ Վահանի գործելակերպը կաթողիկոսական պաշտոնում միանշանակ չընդունվեց Հայ եկեղեցու հայրերի կողմից (հմմտ. Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, սյունակ 1298): Սակայն պետք է հիշել, որ միջնադարում «-իկ» վերջածանցով բազմաթիվ անձնանուններ ենք ունեցել, և այն չպետք է ընկալել որպես վիրավորական:

¹¹ Վահանավանքը, ըստ Սյունյաց պատմիչի, հիմնադրել է Չագիկ Գ-ի կրտսեր որդի Վահանը՝ Ջևանշեր Բ-ի եղբայրը, 911 թ. Բաղաբերդի անտիկ ամրոցի մոտակայքում (տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԽԴ): Վահանավանքը գտնվում է Կապան քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք՝ Շղարջիկ գյուղի դիմաց: Ըստ պատմաբան Գր. Գրիգորյանի՝ Վահանավանքը կառուցվել է հեթանոսական շրջանի դամբարանադաշտի վրա: Քրիստոնեական գերեզմանաքարերի տակ հայտնաբերվել են Ք.ա. XIII-XI դդ. թվագրվող քարարկղե գերեզմաններ (տե՛ս Գր. Գրիգորյան, Վահանավանք, Եր., 2007, էջ 6-7):

¹² «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԽԴ, էջ 175:

¹³ Նույն տեղում, էջ 175-176:

Նա է կառուցում վանքի սեղանատունը: Ձեռնարկում է թրծած խողովակներով մերձակա Տիգրանասարի հյուսիսային լեռնալանջի ակունքներից վանքի տարածք քաղցրահամ ջուր բերելու գործը, որը տնտեսական մեծ նշանակություն ունեցավ տեղի բնակչության համար¹⁴: Վիմագիր արձանագրություններից հայտնի է, որ Վահանը շինարարական աշխատանքներ է կատարում նաև Վայոց ձոր գավառում գտնվող Արատեսի վանքում, որը եղել է գրչության նշանավոր կենտրոն¹⁵:

Սյունյաց Հակոբ Ա եպիսկոպոսի (918-958) մահվանից հետո մի կարճ ժամանակ Սյունիքում անորոշ և անկայուն իրավիճակ էր ստեղծվել: Տիրող վիճակին վերջ տալու, նոր առաջնորդի ընտրություն կազմակերպելու նպատակով Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացի (941-965) 958 թ. հայրապետական երրորդ¹⁶ այցն է կատարում Սյունիք¹⁷: Կաթողիկոսական առաքելության գլխավոր նպատակն էր վճռահատել Սյունյաց թեմում տարիներ շարունակ առկա հիմնախնդիրները, որոնք սպառնալիք էին Հայ եկեղեցու նվիրապետական ամբողջականությանը և դավանաբանական միասնությանը:

Կապանի ամրոցում կաթողիկոսին հյուրընկալում են նախկինում բանադրված «բաղաց բռնակալ» Ջևանշեր իշխանը և Սյունյաց Սմբատ իշխանի որդի, գահերեց իշխան Վասակը: Վերջիններս նրան ներկայանում են մեղայականով և խորապես զոջում իրենց սխալ արարքների համար. «Որոյ եկեալ հանդերձ տամբ և զարմիւք՝ աղիողորմ գթովք և խանթակաթ արտասուօք և ուղիղ դարձիւ, սրտալիր մեղայիւ»¹⁸: Դատելով հետագա զարգացումներից՝ ենթադրելի է, որ Սյունիքում կաթողիկոսին հաջողվել է լուծել մի շարք կարևոր խնդիրներ. վերացրել է խռովությունը, հանդարտեցրել իրավիճակը և հաստատել խաղաղություն, ինչպես նաև կարգավորել է թեմի կարգավիճակին առնչվող տար-

¹⁴ Պատմաբան Գր. Գրիգորյանի կարծիքով՝ այստեղ խոսքը ոչ թե ոռոգման, այլ խմելու ջրի մասին է (տե՛ս **Գր. Գրիգորյան**, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Եր., 1973, էջ 112):

¹⁵ Տե՛ս **Գր. Գրիգորյան**, Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեությունը (IX-XIV դարեր), ՊԲՀ, №2-3, 1999, էջ 169:

¹⁶ Անանիա Մոկացի առաջին անգամ այս խնդրով այցելել է Սյունիք 943 թ., իսկ երկրորդ անգամ՝ 949 թ. (տե՛ս **Գալուստ Տ. Մկրտչեան**, Անանիա Մոկացի, Արարատ, 1897, թիվ Բ, էջ 91-92):

¹⁷ IX դարի վերջերից թուլացել էին կապերը հայրապետական պառոյնի և ծայրամասային թեմերի միջև: Հայոց Արևելից կողմանց և Սյունյաց պառոյները ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն, և նրանց միաբանված գործունեությունը սպառնալիք էր Հայ եկեղեցու միասնականությանը և ամբողջականությանը: Խնդիրն այնքան էր խորացել, որ Սյունյաց Հակոբ Ա Ապստամբ մետրոպոլիտը մեռնելու ստանում էր ոչ թե Հայոց կաթողիկոսից, այլ Աղվանից կաթողիկոսից, ինչը հակասում էր գործող ավանդույթին: Նրանք հրաժարվում էին մասնակցել Հայոց կաթողիկոսի հրավիրած եկեղեցական ժողովներին (տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԱ, էջ 200-203: Այս մասին տե՛ս նաև **Վ. Ալեքսանյան**, Հակոբ Ա եպիսկոպոս Սյունեցու գործունեության շուրջ (918-958), ՊԲՀ, № 3, 2014, էջ 195-209):

¹⁸ «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Ադուանից», Արարատ, 1897, թիվ Գ, էջ 141:

բեր խնդիրներ: Այդ ընթացքում, վերոնշյալից բացի, Անանիան նախաձեռնել է նաև Սյունյաց թեմի նստավայրի՝ Տաթևի եպիսկոպոսական կենտրոնի վերանորոգման աշխատանքները, կանոնավորել միաբանության գործերը: Նկատի ունենալով լուծում պահանջող խնդիրների քանակը և ծավալը՝ կարելի է ենթադրել, որ կաթողիկոսը Սյունիքում մնացել է տևական ժամանակ: Ընդառաջ գնալով տեղացի բարեպաշտ մարդկանց և վանականների խնդրանքներին՝ Անանիա կաթողիկոսը «կացոյց յեպիսկոպոսութեան Սիւնեաց զՎահան՝ որդի Ջեվանշերի, որ էր առաջնորդ մեծի ուխտին Վահանու վանից»¹⁹: Եպիսկոպոսական ձեռնադրությունը տեղի է ունեցել 959 թ. Վահանավանքում²⁰: Թեև կաթողիկոսը մեծարական խոսքերով է բնութագրում նրան՝ անվանելով «զխաչակրօն և զսրբասնունդ տեր Վահան», այնուամենայնիվ նորընտիր եպիսկոպոսից, ինչպես նաև Ջևանշեր և Վասակ իշխաններից պահանջում է գրավոր դատապարտել նախորդ առաջնորդի՝ «չարասադիր և ապստամբամիտ խաբողն Յակովբայ» կենտրոնախույս արարքը և ճանաչել միայն Հայոց հայրապետի գերագահությունը: Երդման և հավատարիմ հպատակության երկարաշունչ գիր է կազմվում: Այն հավաստում է, որ ապագայում նրանք այլևս չեն շեղվի Հայ եկեղեցու նվիրապետական կարգից և կառաջնորդվեն միայն նրա սահմանած կանոններով: Գիրն ավարտվում է սոսկալի նգովքներով, որը վկայում է Հայոց հայրապետի վճռական տրամադրվածության և դավանանքային շեղումների նկատմամբ նրա անհանդուրժողականության մասին. «Ձի մի ոք իշխեսցէ յեպիսկոպոսաց զՅակոբայն գործել կամ խոկալ կամ խորհելու ոճիրս. և զի մի ոք յիշխանաց իշխեսցէ այնպիսւոյն թեկն անել և օգնական կամ ջատագով լինել. և եթէ յանդգնի ոք յեպիսկոպոսաց՝ փութապէս ի ձեռս տացեն կաթողիկոսին Հայոց և մի լիցին դարան և ասպնջական նմա»²¹:

Սյունյաց նախորդ հոգևոր առաջնորդ Հակոբի և տեղի իշխանների որդեգրած ապստամբական վարքն ու անջատողական քաղաքականությունը էժան չնստեցին բարձրապատիվ թեմի հեղինակության վրա: Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին պատժեց Սյունյաց աթոռին, զրկեց մետրոպոլիտության պատվից՝ հետ վերցնելով նախկին առանձնաշնորհումները: Սյունյաց աթոռը զրկվեց հայոց թագավորների և հայրապետների սահմանած պատվո խորհրդանշաններից, որոնք էին առջևից տարվող խաչը, մեծարժեք գավազանը, ոսկեթել գահավորակը²²:

¹⁹ «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԱ, էջ 208:

²⁰ Ըստ Մ. Օրմանյանի՝ ձեռնադրությունը կատարվել է 961 թ. (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, պրնակ 1276):

²¹ «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԱ, էջ 208: Հմտ. «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Ադուանից», Արարատ, 1897, թիվ Գ, էջ 143:

²² Տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԱ, էջ 208: Այս փաստի մասին հակառակն է հիշատակում XIII դարի պատմիչ Կիրակոս

Ըստ Սյունիքի պատմության հեղինակի՝ «Վահան կեցեալ յեպիսկոպոսութեանն ամս վեց»²³ (959-965): Նրա հովվության տարիները նշանավորվում են Սյունյաց կրոնական կենտրոնների բարեկարգմամբ և զարգացմամբ, հոգևոր-կրթական նոր օջախների հիմնադրմամբ, շինարարական նոր կառույցների ավելացմամբ: Մինչ Վահանի պաշտոնակալումը թեմի հոգևոր կենտրոնները տնտեսապես անմխիթար և ավերված վիճակում էին, դադարել էին ժողովրդի համար կատարվող բարեգործությունները, լուսավորության կենտրոնները փակվել էին, տեղական իշխանները յուրացրել էին եկեղեցու կալվածքները և հարստությունները: Հատկապես մեծ վնասներ էր կրել Տաթևի վանքը, ավերվել էր եպիսկոպոսարանը: Այս ամենի հետևանքով ծնունդ առած անիշխանությունից օգտվելով՝ տեղական հոգևոր առաջնորդները դադարել էին ճանաչել Տաթևի եպիսկոպոսության գերագահությունը²⁴: Վահանի եռանդուն ջանքերի շնորհիվ իշխանները մաս-մաս վերադարձնում են վանքի՝ նախկինում բռնագավթած ունեցվածքը: Այդ առիթով Ստ. Օրբելյանը հիշատակում է իր ասածի հավաստիությունը վկայող փաստը այն մասին, թե ինչպես Սահակի որդի Սմբատ II իշխանը (964-998) 964 թ. «դարձոյց անդրէն զգիւղսն Ծացարդ և զՀարժիսի սուրբ եկեղեցիսն ի ձեռն տեառն Վահանայ»²⁵: Թեև Սյունիքի առաջնորդանիստը այս շրջանում դեռևս Տաթևի վանքն էր, սակայն Վահանը եպիսկոպոսական իր գործառույթները գլխավորապես պետք է իրականացներ Վահանավանքից, ինչպես ամրագրված էր Անանիայի հրամանագրում²⁶: Կաթողիկոսի այս հրահանգը թելադրված էր այն իրողությունից, որ Տաթևի վանքը ավերակ վիճակում էր, և «բազում պայծառութիւնք շիջեալ էին և բազում բարեկարգութիւնք խափանեալ ի բազում աւուրս, և յոլով ժառանգութիւնք պակասեալ և յափշտակեալ յեկեղեցւոյն՝ ի մեծ մայրաքաղաքէն Տաթևոյ»²⁷: Պատմաբան Գրիգորյանը ենթադրում է, որ Վահանը ցանկանում էր Սյունիքի եպիսկոպոսական աթոռի նստավայրը տեղափոխել Վահանավանք, որը մտնում էր իր հոր՝ Բաղքի գահակալ իշխան Ջևանշերի տիրությունների մեջ²⁸: Քաղաքական անկախության ընթացքը բռնած Բաղաջ իշխանների համար

Գանձակեցին՝ ասելով՝ «հրամայեաց խաչ տանել առաջի արքեպիսկոպոսին Սինեաց, ուր և երթիցե» (**Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 87): Այս կապակցությամբ, բնականաբար, առավել հավաստի է Սյունյաց պատմիչի հաղորդածը: Հավանաբար Գանձակեցուն ծանոթ չի եղել Անանիա Մոկացու հայտնի գիրը:

²³ «Ստեփաննոսի Սինեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԲ, էջ 211:

²⁴ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ, Եր., 2014, էջ 142:

²⁵ «Ստեփաննոսի Սինեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԲ, էջ 210:

²⁶ Տե՛ս նույն տեղը:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Տե՛ս **Գր. Գրիգորյան**, Վահանավանք, էջ 9:

Սյունյաց հոգևոր կենտրոնի տեղափոխումը Ծղուկից Բաղք հետապնդում էր իշխանության ամրապնդման և ինքնուրույնության հաստատման նպատակ:

965 թ. վախճանվում է Անանիա կաթողիկոսը: Նույն թվականին Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-977) հրամանով գումարվում է «ժողով եպիսկոպոսաց և հարց սրբոց»: Ժողովը հրավիրվում է թագավորանիստ Շիրակավան քաղաքում, որին մասնակցում է նաև Սյունյաց Վահան եպիսկոպոսը²⁹: Եպիսկոպոսական ժողովը նախագահում էր Աղվանից Հովհաննես կաթողիկոսը³⁰: Ժողովականները միաձայն քվեարկությամբ ընտրում և Հայոց կաթողիկոս են օծում Սյունյաց Վահան եպիսկոպոսին՝ «վասն առաել սրբութեանն և իմաստութեանն»: Վահանի ընտրությունը կատարվել է օրինավոր կերպով՝ Հայ եկեղեցու ծիսական կանոններին համապատասխան. «Դնեն ձեռն ի վերայ բազմութիւն եպիսկոպոսացն և օծանեն զնա կաթողիկոս Հայոց»³¹: Նրա նստավայրը Արգինա գյուղաքաղաքի կաթողիկոսարանն էր:

Նոր կաթողիկոսի ընտրության հանգամանքների մասին Ուռհայեցին մի ուշագրավ դրվագ է հիշատակում, ըստ որի՝ Վահանը կաթողիկոս է ընտրվել «հրամանաւ Անանիայի, Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց թագաւորացն»³²: Կյանքի վերջին շրջանում, հավանաբար ունենալով ֆիզիկական տկարություն և կանխագգալով իր մոտալուտ վախճանը, անխոնջ հայրապետը փորձում է իրավահաջորդ կարգել ուժեղ և փորձառու հոգևորականի: Որոշում է գահը հանձնել այնպիսի մեկին, որը Հայաստանի համար ներքին ու արտաքին մարտահրավերներով լեցուն ժամանակներում կապահովեր Հայ եկեղեցու նվիրապետության ամբողջականությունը և դավանանքային ավանդապահությունը: Այդ հարցով նա խորհրդակցում է Հայոց և Աղվանից քաղաքական ու կրոնական պատասխանատուների հետ: Վերջիններս համախոհությամբ որոշում են, որ այդպիսի առաջնորդ կարող է լինել Վահան Սյունեցին: Իր նախընթաց հոգևոր ծառայության ընթացքում Վահանը թույլ չէր տվել այնպիսի արարք, որ խստաբարո Անանիա հայրապետը կասկա-

²⁹ Տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԲ, էջ 211: Հայտնի է, որ Աշոտ Գ-ի թագավորական օժման արարողությունից հետո, որը համընկել է Անիի մայրաքաղաք հռչակելու տոնակատարություններին, թագավորանիստը եղել է Անի: Սակայն պետք է նշել, որ Շիրակավանը դեռ չէր կորցրել իր քաղաքական և հոգևոր նշանակությունը, և IX-X դարերի եկեղեցական ժողովների մի մասը տեղի է ունեցել հենց այստեղ:

³⁰ Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 33:

³¹ «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԲ, էջ 211: Հմմտ. **Ն. Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. Բ, Շուշի, 1905, էջ 115, 119:

³² **Մատթէոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 33: Ուռհայեցու այս վկայության մեջ ակնառու շփոթ կա: Հովհաննես-Սմբատ և Աշոտ արքաները իշխել են նրա հիշատակած դեպքից առնվազն 50 տարի հետո: Ուռհայեցու երկում Անանիա Մոկացու հրամանով կաթողիկոսի իրավահաջորդ նշանակված լինելու փաստը շահեկան վկայություն է Վահան Սյունեցու համար, սակայն այս մասին լռում է Սյունյաց պատմիչը:

ծեր նրա հավատարմությանը և սկզբունքայնությանը: Սյունիքում վեցամյա առաջնորդության շրջանում նա աչքի էր ընկել կրոնական գործերի հմուտ կազմակերպմամբ, վանքերի, եկեղեցիների բարեկարգմամբ, կրթական-մշակութային կենտրոնների զարգացմամբ:

Սակայն հարկ է նշել, որ Վահան Սյունեցու ընտրությունը պայմանավորված չէր միայն նրա ակնառու արժանիքներով, այլև թելադրված էր ժամանակի քաղաքական և կրոնական մի շարք իրողություններով: Նրա ընտրության մեջ առկա էր կարևոր քաղաքական բաղադրիչ: Հայտնի է, որ Սյունիքի աշխարհիկ և կրոնական վերնախավին մշտապես բնորոշ են եղել կենտրոնախույս ձգտումները: Իսկ X դարում՝ ավատական մասնատվածության ժամանակաշրջանում, այդ միտումներն ավելի էին ուժեղացել: Հայոց կաթողիկոսությունը պայքարում էր թագավորությունը պառակտող գործոնների դեմ, ջանում էր կարգավորել միջիշխանական կնճռոտ խնդիրները, ձգտում էր ապահովելու ժողովրդի հոգևոր միասնությունը: Ուստի Հայոց հայրապետի պաշտոնում սյունեցի հոգևորականի թեկնածության առաջադրմամբ հայոց քաղաքական և կրոնական ավագանին փորձ էր անում մեծացնել ազդեցությունը Սյունյաց նախարարության վրա, կանխել երկրամասի անջատողական քաղաքական ընթացքը: Ի դեմս Սյունիքի եպիսկոպոս Վահան Սյունեցու՝ որը պետք է գլխավորեր հայոց բարձրագույն հոգևոր իշխանությունը, շեշտադրվում էր Հայ եկեղեցու միասնականությունը: Վերոհիշյալ գործոններով թերևս պետք է բացատրել Վահան եպիսկոպոսի՝ առանց ընդդիմության կաթողիկոս ընտրվելը:

Վահանի պաշտոնավարման ժամանակի և տևողության վերաբերյալ միատեսակ մտտեցում գոյություն չունի, ինչը հասկանալի է, որովհետև Վահանի հայրապետությունը ընդհատվել է, նա աթոռանկ է արվել, բայց դրանից հետո չի հրաժարվել պաշտոնից: Մի քանի տարի եղել է հակաթոռ կաթողիկոսի կարգավիճակում: Այս հանգամանքը ժամանակագրական տարակարծությունների տեղիք է տվել: Պատմիչների մի մասի վկայությամբ՝ նա աթոռակալել է մեկ կամ երկու տարի³³: Ըստ Օրբելյանի և Ուռհայեցու՝ պաշտոնավարել է հինգ տարի³⁴: Վեր-

³³ Տե՛ս **Սամուել Անեցի**, նշվ. աշխ., էջ 176: «Հաւարումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», էջ 89: **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 87: «Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն հայոց», Մոսկուայ, 1860, էջ 17: «Մանր ժամանակագրություններ», XIII-XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան, Եր., 1956, էջ 338: Սյունյաց պատմիչը նրա պաշտոնավարման երկու տարբեր թվեր է հիշատակում, իր կազմած հայոց կաթողիկոսների գավազանագրքում Օրբելյանը Վահան հայրապետի անվան դիմաց որպես պաշտոնավարման տարիների քանակ նշում է երկու թիվը (տե՛ս «Ստեփաննոսի Սինեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ՀԱ, էջ 364):

³⁴ Տե՛ս «Ստեփաննոսի Սինեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԽԴ, էջ 176: **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 33: Ուռհայեցին Վահան Սյունեցուն թյուրիմացաբար հիշատակում է բյուզանդական Վասիլ և Կոստանդին կայսրերի և Սենեքերիմ Արծրունու (1003-1021) հետ հայոց 983 թվականին, որպես ժամանակակիցներ (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 34):

ջին վկայությունն ընդունելի է, սակայն որոշ վերապահումներով: Վահանը Հայոց հայրապետ է դարձել Անանիա Մոկացու մահվան տարում, այսինքն՝ 965 թ., և պաշտոնավարել մինչև 970թ.: 970 թ. նա հեռանում է Վասպուրական և մինչև 972 թ. որպես հակաթոռ կաթողիկոս, վտարյալ վիճակում շարունակում է գործել՝ վիճաբանությունների ու անհաշտ հարաբերությունների մեջ գտնվելով եկեղեցու մի շարք վարդապետների հետ:

965 թ. օծվելով Հայոց կաթողիկոս և «կեցեալ ամ մի»՝ Վահանը նորամուծություններ է կատարում հայ եկեղեցու ծիսադավանանքային կարգերի մեջ՝ շեղվելով Հայ եկեղեցու հայրերի ավանդած սկզբունքներից: Մովորականից «դրականորեն» տարբերվող հարաբերություններ է հաստատում վրաց և հույն եկեղեցիների հետ: Այս մասին հայտնում են ժամանակագրորեն նրանից ոչ շատ հետո ապրած հայ մատենագիրները, որոնք հայ եկեղեցական կարգերի և դավանական սկզբունքների անխախտ պահպանման ջատագովներ են: Ավանդապահ վարդապետները մեղադրում են Վահան կաթողիկոսին քաղկեդոնականների հետ նամակագրություն ունենալու և ջերմ հարաբերություններ հաստատելու պատրաստակամության համար. «Մա ընդ քաղկեդոնականս սիրելութիւն եւ հաճութիւն կամեցաւ առնել թղթովք»³⁵: Համաձայն լինելով Ասողիկի հետ՝ Անեցին լրացումներ է կատարում՝ հայտնելով. «Մա դաշնադիր եղև ընդ Վիրս միաբան դաւանութեամբ»³⁶: Հավելում է նաև սրբապատկերների ներմուծման մասին՝ դա որակելով դեպի քաղկեդոնականություն հակվելու «իրեղեն» ապացույց³⁷: Ընդունելով սրբապատկերների ներմուծման երևույթները՝ Սյունյաց բարձրաստիճան հոգևորական պատմիչն այնուամենայնիվ փորձում է մեղմել Վահանի «մեղքը»՝ ասելով, որ մեղադրողները փաստ չունեին, միայն կասկածեցին, թե հույների հետ դաշինք է կնքել և կամենում է նրանց ադանդը մեր եկեղեցի խցկել³⁸: «Սկսաւ պատկերս բերել ի Վրաց և դնել ի վերայ սեղանոյն. և հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առնել՝ ըստ Հոռոմոց սահմանին և զսեղանսն կաւնիւք զարդարել և առանց կաւնի ոչ մատու-

³⁵ **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ը, էջ 756:

³⁶ **Մամուկ Անեցի**, նշվ. աշխ., էջ 175: *Հմտ.* Ժամանակագիր Դավիթ Բաղիշեցու հիշատակարանում ևս արձանագրված է վրաց քաղկեդոնականների հետ նրա համախոհության մասին (տե՛ս «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., էջ 338):

³⁷ Տե՛ս **Մամուկ Անեցի**, նշվ. աշխ., էջ 175: Հետագա պատմիչներ Վարդան Արևելցին և Կիրակոս Գանձակեցին գրեթե կրկնում են Մամուկ Անեցու խոսքերը: Նույնը նաև «Յայսմաւորք», տպ. Գր. Մարզվանեցու, Կ. Պոլիս, 1730, մարտի ի և մայիսի իէ:

³⁸ Տե՛ս «Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԲ, էջ 211: Իր ծանոթագրություններում Ստ. Օրբելյանի պատմության հրատարակիչ Կ. Շահնազարյանցը գրում է, որ Վահանի վտարման պատճառը ոչ թե սրբապատկերների կիրառությունն էր Հայոց եկեղեցում, այլ հունական իկոնոստասի (խաչկալ) ներմուծումը և հույն եկեղեցու հետ հավատի միաբանության հաստատումը (տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական, Արարեալ Ստեփանոսի Օրբելեան», հ. Բ, ի լոյս ընծայեաց Կ. Վ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 296, ծանոթ. 2):

ցանել պատարագ»³⁹, -խոստովանում է Ստ. Օրբելյանը: Մյուսեցի պատվախնդիր մատենագիրը իր նախորդների արարքը ինչ-որ առումով համարում է նաև իր պատվի խնդիրը: Այդ պատճառով փորձում է տուրք չտալ զգացականությանը, որքան հնարավոր է իրատեսորեն մոտենալ հարցին՝ մատնանշելով Վահանի նկատմամբ ձևավորված վերաբերմունքի պատճառները, մանավանդ որ Օրբելյանը հայտնի էր որպես Հայոց եկեղեցու մարտնչող թևի խոշոր ներկայացուցիչ և հանուն հայոց ճշմարիտ դավանանքի պատրաստ էր «ընդ մեր հարսն ի դժոխս իջանել և ոչ ընդ Հոռոմոց յերկինս ելանել»⁴⁰, ինչպես ինքն է 1302 թ. նամակով պատասխանում Գրիգոր Անավարզեցի (1293-1307) կաթողիկոսին:

Վահանի այսպիսի գործելակերպը հայ վարդապետների կողմից գնահատվում էր իբրև հարված ազգային և կրոնական ինքնության գիտակցությանը: Այդ մտահոգություններից ելնելով՝ Հայ եկեղեցու գործիչները դիմում են Աշոտ Գ թագավորին՝ կանխելու կաթողիկոսի առաջնորդությամբ վարվող քաղաքականությունը: Թագավորի հրամանով այդ խնդիրը քննարկելու համար 970 թ. Անիում եկեղեցաժողով է գումարվում: Պատմիչը հանվանե հիշատակում է ժողովի մասնակիցներին՝ Արշարունյաց եպիսկոպոս տեր Խաչիկ, Կամրջաձորի առաջնորդ հայր Պողիկարպոս, Հոռոմոսի վանքի վանական հայր Սարգիս, Սևանա վանքի վանական հայր Ստեփանոս և այլ եպիսկոպոսներ ու եկեղեցական հայրեր⁴¹: Ծանոթ լինելով ժողովի օրակարգին և կանխատեսելով դրա ընթացքը՝ Վահանը հրաժարվում է մասնակցելուց: Ս. Օրմանյանը այս պարագայում միանգամայն իրավացիորեն հանդիմանում է Վահանին որդեգրած կեցվածքի համար՝ ասելով, որ «իր նախորդներեն Յովհաննես Ովայեցին եւ Գեորգ Գառնեցին նմանօրինակ պարագաներու մէջ չէին խուսափած քննութենէ, եւ արդարացած էին ժողովով»⁴²: Ժողովականներն առանց կաթողիկոսի քննում են նրա գործերը և բացահայտում միաբանության ձեռնարկները հույն և վրաց եկեղեցիների հետ: Ժողովը սահուն ընթացք չի ունենում. մասնակիցների մէջ բացակայում է միակարծությունը: Սակայն այնտեղ գերակշռում էին Վահանին գահընկեց անելու տեսակետի կողմնակիցները, որոնք վայելում էին աշխարհիկ ղեկավարության Բագրատունիների բացահայտ աջակցությունը: Ժողովականները կարգալուծ են հռչակում նրան և «ծանուցեալ հաւաստեալ զհերձուած կորստական մտաց նորա որոշեալ զնա հալածական արարին»⁴³: Վահանը չի ընդունում իր

³⁹ «Ստեփաննոսի Մինեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Միսական», գլ. ԾԲ, էջ 211:

⁴⁰ Նույն տեղում, գլ. ԿԸ, էջ 336:

⁴¹ Տե՛ս **Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ը, էջ 756:

⁴² **Ս. Օրմանեան**, նշվ. աշխ., հ. Ա, սյունակ 1301:

⁴³ **Սամուէլ Անեցի**, նշվ. աշխ., էջ 175: *Հմմտ.* «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի», հրատ. Աշ. Աբրահամյան, Եր., 1942, էջ 12:

նկատմամբ եկեղեցաժողովի կայացրած որոշումը և հեռանում է Վասպուրական: Ապաստանում է Աբուսահլ-Համագասպ (959-972) թագավորի մոտ՝ Չորո վանքում: Աբուսահլ-Համագասպը սիրով ընդունում է նրան և ճանաչում Հայոց կաթողիկոս⁴⁴: Արծրունի թագավորները վաղուց էին ջանում Վասպուրական տեղափոխել Հայոց կաթողիկոսարանը կամ կաթողիկոսական աթոռին տեսնել իրենց նախընտրելի թեկնածուին⁴⁵: Սակայն Անիում շարունակվող եկեղեցաժողովը նոր կաթողիկոս է ընտրում Սևանի վանքի վանահայր Ստեփանոսին (970-972)⁴⁶: Այս գործողություններով հայրապետական աթոռը ըստ էության երկփեղկվում է՝ սկիզբ դնելով հակաթոռ կաթողիկոսության գոյությանը Վասպուրականում: Վահանը ոչ միայն չի ընդունում ժողովի որոշումները, այլև բանադրում է նոր կաթողիկոս ընտրած ժողովականներին և Աշոտ Գ թագավորին: Նգովագրեր է հղում նրանց և ստանում նույնաբովանդակ պատասխաններ: Վասպուրականում եղած ժամանակ Վահանը շարունակում է ակտիվորեն գործել: Հայոց եկեղեցին հույն և վրաց եկեղեցիների հետ միաբանելու բովանդակությամբ նամակ է ուղարկում Մելիտինե քաղաքի Թեոդորոս մետրոպոլիտին⁴⁷: 974 թ. Բյուզանդիայի հայազգի կայսր Հովհաննես Չմշկիկը (969-976) Հայաստանի վրայով արշավանք է սկսում դեպի Միջագետք և ճանապարհին կանգ է առնում Տարոն գավառի «Այծեաց բերդ» կոչվող վայրում: Բյուզանդական կայսեր՝ անհայտ դիտավորություններով Հայաստանում հայտնվելը և ռազմական հնարավոր սպառնալիքը ժամանակավորապես համախմբում են հայկական իշխանություններին Աշոտ Գ-ի շուրջը: Բյուզանդիայի կայսեր մոտ գնացած հայազգի պատգամախոսները՝ իշ-

⁴⁴ Ըստ բազմավաստակ Մ. Օրմանյանի՝ Վահանի՝ Արծրունիների մոտ ապաստանելը նշանակում էր Վասպուրականի աթոռի վերանորոգում (տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. Ա, սյունակ 1313): Հայր Օրմանյանի կարծիքը միանգամայն ընդունելի է, քանի որ Վահան Ա Սյունեցուն նախորդած կաթողիկոսների (Ստեփանոս Բ Ռշտունի, Թեոդորոս Ա Ռշտունի, Եղիշե Ռշտունի, Անանիա Ա Մոկացի) նստավայրը եղել է Վասպուրականի Աղթամար կղզին: Հայոց հայրապետ Անանիա Մոկացին (941-965) առանձին թեմերի անջատողական միտումներին վերջ տալու նպատակով 949 թ. կաթողիկոսական նստավայրը տեղափոխել է Բագրատունիների մայրաքաղաք Կարս՝ Արգինա գյուղաքաղաք: XVII դարի լատին եկեղեցու հայր Կղեմես Գալանոսն իր՝ հայ և հռոմեական եկեղեցիների միաբանությանը նվիրված աշխատության մեջ Վահանին ճանաչում է Վասպուրականի կաթողիկոս: Խոսելով նրա մասին՝ ասում է, որ նա էր «հնագանդ եկեղեցույն Հռովմայ: քանզի զՎահան ի վասպուրակէ նստուցին և զսա փախստատական արարեալ վս կարծեաց դաւանութե ժողովոյն քաղկեդոնի, և վս պատկերս մուծանելոյ յեկեղեցի և ի սեղանն սբ.: գոր վասն այսր կարծեաց փախուցեալ և զնացեալ տիրէ կողմանն վասպուրակի» (**Կղեմես Գալանոս**, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սբ եկեղեցոյն Հռովմայ, հ. Ա, Հրոմ, 1690, էջ 211):

⁴⁵ Տե՛ս **Հր. Միրզոյան**, Նարեկացիագիտական հետազոտություններ (հոդվածների ժողովածու), Եր., 2010, էջ 44:

⁴⁶ Ստեփանոս Գ Սևանցին Մաշտոց և Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսների ազգականն էր (տե՛ս **Միքայել Չամչյանց**, Հայոց պատմություն, հ. Բ, Եր., 1984, էջ 841):

⁴⁷ Տե՛ս **Միքայել Չամչյանց**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 840: Նման նամակի վավերականությունը կասկածելի է, քանի որ այս մասին որևէ այլ հիշատակություն չկա:

խաններն ու վարդապետները, նրան են փոխանցում Հայոց կաթողիկոս Վահանի նամակը, որում վերջինս խնդրում էր «խնայել ի քրիստոնեայս» և միաբանություն հաստատել հայերի և հույների միջև⁴⁸: Ուռհայեցու հաղորդմամբ՝ Հովհաննես Չմշկիկը սիրով ընդունում է Վահանի նամակը, մեծարում հեղինակին ու գովաբանում նամակաբերին: Հայերի ու հույների միջև սիրո ուխտ է հաստատվում⁴⁹: Հայոց ավագանու քայլերն ուղղված էին կայսրության և հայոց իշխանությունների միջև ձևավորված լարված իրավիճակի լիցքաթափմանը⁵⁰: Հայկական իշխանությունները դաշինք կնքեցին վտանգավոր հակառակորդի հետ և 10 հզ. ընտիր զինվորներից կազմված օգնական զորք տրամադրեցին նրան: Կնքված դաշինքը հնարավորություն էր տալիս ապահովագրվելու արաբական սպառնալիքից⁵¹:

Վասպուրականում հանգրվանած ժամանակ Վահանի եռանդուն և անզիջում կեցվածքը պայմանավորված էր Աբուսահլ թագավորի անվերապահ աջակցությամբ: Վահանի՝ Վասպուրականում ապաստանելու փաստը թույլ է տալիս ենթադրել, որ դեռևս մինչ այդ Արծրունի նախարարների և իր միջև կրոնական ու քաղաքական հարցերում եղել է համախոհություն: Նրանք ունեցել են մարտավարական միատեսակ մոտեցումներ կայսրության կողմից օրեցօր ահագնացող ճնշումներին հակադդելու հարցում: Հակառակ դեպքում՝ տրամաբանական կլիներ, որ Վահանը պատասպարվեր իր հայրենի ոստանում՝ Սյունիքում, և ոչ թե Վասպուրականում: Ճիշտ է, քաղկեդոնականությունը Վասպուրականում չունեի այնպիսի տարածում, ինչպես Աղվանքին և Վրաստանին սահմանակից Հայաստանի մյուս նահանգներում, սակայն X դարում Վասպուրականի թագավորները տարբեր նկատառումներով հակված էին կայսրության հետ քաղաքական ու կրոնական հարաբերությունների մերձեցմանը⁵²: Այս ենթադրության հիմքերից մեկը Աբուսահլ-Համա-

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 845-846: Այդ շրջանում նամակագրության ժանրը երկրների քաղաքական և կրոնական առաջնորդների միջև բավականին տարածված էր: Խնդրո առարկա նամակը հավանաբար պատրաստվել է Վահանի կենդանության օրոք, այսինքն՝ նախքան 972 թ., և անհայտ պատճառներով մնացել չուղարկված: Նամակում շեշտադրվում էր հայերի և հույների հոգևոր միաբանության գաղափարը, և կայսեր հետ հանդիպումը պատեհ առիթ էր թուրթը փոխանցելու համար: Ըստ հայր Չամչյանի՝ նամակում Վահանը խոսում է նաև իր գահընկեցության մասին՝ որպես պատճառ մատնանշելով հայերի և հույների միջև միաբանություն հաստատելու իր ցանկությունը (տե՛ս **Միքայել Չամչյանց**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 845-846): Չամչյանի այս վկայությունից հետևում է, որ Վահանը նամակը գրել է հակաթոռ կաթողիկոսի կարգավիճակում Վասպուրականում 970-972 թթ.:

⁴⁹ Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 18:

⁵⁰ Տե՛ս **К. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, էջ 114:

⁵¹ Տե՛ս **Վ. Իսկանյան**, Հայ-Բյուզանդական քաղաքական հարաբերությունների պատմությունից (10-րդ-11-րդ դդ.), Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկ. մանկ. ինստ. գիտ. աշխ. ժողովածու, № 6, Եր., 1957, էջ 106:

⁵² Տե՛ս **Հ. Վարդան Ըստկարեան**, Եկեղեցական պատմություն, Վիեննա, 1872, էջ 197:

զասպ թագավորի հոր՝ Գագիկ Արծրունու 926 թ. երկարաբան նամակն է՝ ուղղված Կոստանդնուպոլսի պատրիարք Թեոփիլակտոսին և Ռոմանոս Ա Լակապենոս կայսրին (920-944): Նամակում Գագիկ Արծրունին հույների հետ միաբանության, հոգևոր սիրո և տարածայնությունների վերացման իր սրտի փափագն է հայտնում՝ խնդրելով «հնարաւորել, ի բաց բառնալ զկրճինն որ կայ ի միջի, զցանկն քակել և զմիջնորմն յատակել, և զերկուսինն հաստատել ի մի նոր մարդ»⁵³: Թեև նամակն ունի կրոնական բովանդակություն, սակայն ակնհայտ է նրա քաղաքական ենթատեքստը: Բյուզանդացիները ամենայն հավանականությամբ թերահավատորեն են վերաբերվում հիշյալ նամակին: Այդ պատճառով այն որևէ հետևանք չի ունենում և նույնիսկ պատասխանի չի արժանանում: Սակայն սա փաստ է, որը խոսում է այդ ժամանակ Վասպուրականի իշխող շրջանակներում տիրող տրամադրությունների մասին: Ուստի պատահական չէր Վահան Մյունեցու այնտեղ հայտնվելը, որը կաթողիկոսի պաշտոնում ցույց էր տվել, որ ինքը հույների հետ եկեղեցական հարաբերությունները մերձեցնելու կողմնակից է:

Երկրորդ հանգամանքը, որ կարող էր Վահանին Վասպուրական ուղղորդել, Աշոտ Գ թագավորի և նրա միջև գոյություն ունեցող տարածայնություններն էին: Վահանի՝ որպես Հայոց կաթողիկոսի բյուզանդամետ քաղաքականությունը որքան համահունչ էր Վասպուրականի Արծրունիների վարած քաղաքականությանը, այնքան աննպաստ էր Բագրատունիների ծրագրերին: Իր քայլերով Վահանը առաջին հերթին հարվածում էր Բագրատունիներին, որոնք ձգտում էին երկարաձգել թագավորության գոյությունը: Հայտնի է, որ այդ ժամանակ Բագրատունիները և Արծրունիները գտնվում էին ներքին հակամարտության մեջ: Հետևաբար Վահանը նախընտրում է ապավինել իրենց հզորությամբ Բագրատունիներին գրեթե չզիջող Արծրունիների հովանավորությանը⁵⁴: Բագրատունի նախարարները, ի դեմս Աշոտ Գ Բագրատունու, Բյուզանդական կայսրության և Արծրունիների թագավորության միջև զարգացող հարաբերություններում տեսնում էին իրենց անկախությանը սպառնացող իրական վտանգ: Արծրունիների թագավորության և կայսրության միջև ձևավորվող ջերմությունը հակադարձ ազդեցություն էր թողնում Վասպուրականի և Անի-Շիրակի միջև հարաբերությունների վրա⁵⁵: Կանխատեսելով բյուզանդացիների հեռագնա քաղաքական ծրագրերը՝ Բագրատունիները հասկանում էին, որ նրանք որդեգրել են Հայաստանը մաս առ մաս նվաճելու մարտավարություն. առաջին հերթին շարքից հանում են ռազմական առումով թույլ իշխա-

⁵³ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 301:

⁵⁴ Օրմանյանը գտնում է, որ Վահանի՝ Վասպուրականում ապաստանելու փաստը անպայմանորեն չի խոսում նրա նկատմամբ եղած քաղկեդոնականության կասկածների մասին (տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., սյունակ 1302):

⁵⁵ Տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Եր., 1973, էջ 178:

նություններին՝ վերջին հուժկու հարվածը պահելով ամենից հզոր միավորման՝ Շիրակի Բագրատունիների թագավորության համար:

Վասպուրականում Վահանին անհանգիստ կյանք էր վիճակված: Հակադիր ճամբարի հոգևորականները, հատկապես Տարոնի և Արևմտյան Հայաստանի մյուս գավառների եպիսկոպոսները, վճռական էին տրամադրված խնդիրը հանգուցալուծելու հարցում: Հաշտյանքում, Ծովքում, Խորձյանում և այլ վայրերում կազմակերպելով Վահանի վարքագիծը դատապարտող եկեղեցաժողովներ՝ Ստեփանոս եպիսկոպոսը Մովսես վարդապետի և Սյունյաց անվանի հոգևորական Բարգեանի ուղեկցությամբ հաշտարար առաքելությամբ մեկնում է Վասպուրական: Այցի նպատակն էր հետ պահել Վահանին անջատողական և կայսերական եկեղեցուն միտված քայլերից, իսկ Աբուսահլ-Համագասպին՝ հակաբագրատունի գործողություններից: Այս փաստը խոսում է այն մասին, որ դեռևս մեծ էր Վահանի ազդեցությունը եկեղեցական և աշխարհիկ գործիչների շրջանում, այլապես այդքան ջանքեր չէին վատնի գահընկեց հոգևորականին սաստելու համար: Սակայն Ստեփանոսի հորդորներին ոչ մի կերպ չեն արձագանքում Վասպուրականի թագավորն ու Վահանը: Դեռ ավելին՝ Աբուսահլ-Համագասպի հրամանով Ստեփանոս եպիսկոպոսը և նրա ուղեկից վարդապետները արքայություն են Աղթամար կղզի⁵⁶: Ընդհանուր լեզու գտնելու նպատակով Վասպուրական ժամանած հոգևորականների արգելափակման փաստից ենթադրվում է, որ նրանց առաքելությունը ոչ միայն ձախողվել է, այլ ավելին՝ կողմերի միջև դիմակայությունն ավելի է խորացել: Հետագայում հայր Բարգեանին և Մովսեսին ազատ են արձակում, իսկ Ստեփանոս եպիսկոպոսին՝ որպես այս գործի նախաձեռնող, Աբուսահլ թագավորի հրամանով բանտարկում են Կոտորի բերդում⁵⁷, որտեղ էլ նա որոշ ժամանակ անց վախճանվում է: «Ոչ գիտեմ, թե նենգութեամբ ինքեանց եւ թէ այլով պատճառաւ»⁵⁸, - տարակուսում է Ասողիկը: Վերոհիշյալ փաստերը հիմք են տվել նշանավոր նարեկացիագետ, պրոֆեսոր Հր. Միրզոյանին եզրակացնելու, որ Վասպուրականի թագավոր-եղբայրները կաթողիկոսական ընտրություններում չեն եղել դիտորդի կարգավիճակում, ընդհակառակը միջամտել են այդ գործընթացներին՝ ունենալով իրենց նախընտրելի թեկնածուն⁵⁹:

⁵⁶ Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ը, էջ 756:

⁵⁷ Կոտորի բերդը գտնվում է Վասպուրական նահանգի Անձախիձոր գավառում՝ Կոտոր գետի ափին՝ Խոյից արևմուտք (տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Եր., 1986, էջ 227):

⁵⁸ **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ը, էջ 756-757:

⁵⁹ Տե՛ս **Հ. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 45: Բազմահմուտ նարեկացիագետը, մանրակրկիտ քննության ենթարկելով Նարեկացուն առաջադրված բամբասանք-մեղադրանքները, ենթադրում է, որ 992 թ. կաթողիկոսական ընտրություններին թեկնածուի կարգավիճակում մասնակցել է նաև Գրիգոր Նարեկացին, որի թեկնածությունը պաշտպանել են Արծրունի թագավորները (տե՛ս **Հ. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 44, **նույնի** Նարեկա-

Ստեփանոս Գ Սևանցու մահից հետո հայ ավագանու բազմաթիվ ներկայացուցիչներ և հոգևորականներ դիմում են Աշոտ արքային՝ հորդորելով նրան հայրապետական աթոռին կրկին հաստատել Վահանին: Սակայն բազում էին նաև այս առաջարկությանն ընդդիմացողները⁶⁰: Հարցը ձգձգվեց, և 972 թ. Վահանը վախճանվեց: Ստեփանոս Գ Սևանցու և Վահան Ա Սյունեցու մահով վերացավ հակամարտությունը նաև նրանց կողմնակիցների միջև: Վերոհիշյալ երկուսի պայքարն այնքան վնասաբեր է եղել Հայոց աշխարհի համար, որ Ասողիկը, արձանագրելով կաթողիկոսների մահը, թեթևացած շունչ է քաշում և ազդարարում. «Եւ բարձաւ խռովութիւնն յաշխարհէս Հայոց»⁶¹: Եկեղեցաժողովը նոր կաթողիկոս է ընտրում Անանիա Մոկացու քեռորդի Խաչիկ Ա Արշարունուն (972-990): Վահանը թաղվում է Վասպուրական նահանգի Տոսպ գավառի Չորովանքի եկեղեցու բակում, որտեղ հուղարկավորված էին Գևորգ Բ Գառնեցի (877-897) և Հովհաննես Դրասխանակերտցի (898-929) կաթողիկոսները:

Գնահատելով վրաց եկեղեցուց սրբապատկերների ներմուծման փաստը՝ պարզ է դառնում, որ Վահանը վարել է Հայ եկեղեցու կողմից դարերով սրբագործված ծիսադավանանքային կարգերին հակասող քաղաքականություն⁶²: Նրա դիրքորոշումը հակասում էր նաև տակավին VII դարի սկզբին Հայոց կաթողիկոս Աբրահամ Ա Աղբաթանեցու (607-613) բանաձևած կարգերին, որոնցով սահմանվել էին որոշակի արգելքներ: Հայ-վրացական եկեղեցական բաժանումից հետո (608 թ.) Հայոց հայրապետ Աբրահամ Ա Աղբաթանեցին հատուկ վճռագրով արգելել էր հոգևոր հաղորդակցությունը, խնամիական կապերը հայերի և վրացիների միջև⁶³: Քաղկեդոնականների հետ հարաբերությունների մեջ մտնելու պատճառով կաթողիկոս Գևորգ Գառնեցու (877-897) կողմից անխնա դատապարտվեց նաև Վահան Սյունեցուն ժամանակամերձ Սևանա վանքի վանահայր Մաշտոցը, որը հետագայում մեկ տարի (897-898)⁶⁴ պաշտոնավարել է որպես Հայոց կաթողիկոս: Հայ եկեղեցու ավանդապահ հայրերի ողջամտության և գործնական քայլերի շնորհիվ էր, որ կանխվեցին Վահան Սյունեցու՝ հայ և հույն եկեղեցիների միվորման հեռագնա ծրագրերը:

ցու հասցեին հնչած բամբասանքների քննություն, ԲԵՀ, № 3, 2018, էջ 67):

⁶⁰ Տե՛ս **Միքայել Չամչյանց**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 842:

⁶¹ **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ը, էջ 757:

⁶² Սրբապատկերները Հայ եկեղեցում միշտ էլ գործածվել են: Հայերը պատկերապաշտ չեն եղել, բայց հնուց ի վեր կառուցել են աստվածաշնչյան բովանդակություն ունեցող սրբապատկերներով և որմնանկարներով զարդարված բազմաթիվ եկեղեցիներ: Հայոց մեջ ընդունված է եղել պատկերհարգությունը: «Յայտ է, թէ յարգութիւն պատկերաց միշտ ընդունելի եղև հայոց, ուստի և գուր զպարտութիւն է այն՝ գոր առնեն ոմանք ի մատենագրացն յունաց և այլոց, թէ հայք ոչ պատուեն զպատկերս», -գրում է մեծավաստակ Չամչյանը (**Միքայել Չամչյանց**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 1018, 1021):

⁶³ Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 194: **Ուխտանէս Եպիսկոպոս**, Պատմութիւն հայոց, հ. Բ, Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 136:

⁶⁴ Տե՛ս **Մ. Օրմանեան**, նշվ. աշխ., սյունակ 1153:

Փաստենք, որ Հայոց պետականությանը և ազգային ինքնությանը նետված մարտահրավերները հետագայում ևս շարունակվեցին: Հայաստանի նկատմամբ իր նվաճողական նկրտումներում Բյուզանդիան տարբեր ձևերով մշտապես խաղարկել է եկեղեցական միության խաղաքարտը: Դավանանքային ճնշումները տարբեր ժամանակներում նոր ձևեր և ծավալներ են ընդունել, սակայն նպատակները մնացել են նույնը: Վահան Ա Սյունեցուց հետո աթոռակալած Խաչիկ Արշարունու օրոք Բյուզանդական կայսրության կրոնական հալածանքներն ավելի սաստկացան: Մեքաստիայի և Մելիտիների մետրոպոլիտների նկատմամբ Խաչիկ կաթողիկոսը գործնական միջոցների դիմեց՝ հունական եկեղեցու ոտնձգություններից Հայ եկեղեցու ուղղափառ դավանությունը պաշտպանելու համար⁶⁵:

Պատմագրության մեջ երբեմն գուցադրվել են Վահան Սյունեցու և նույն շրջանում ապրած հանճարեղ քանաստեղծ և մտածող Գրիգոր Նարեկացու անունները: Կենդանության օրոք Նարեկացին ամենայն հավանականությամբ մեղադրվել է թոնդրակեցիներին հարելու մեջ⁶⁶: Հավանաբար այս կարգի մեղադրանքներն էլ հիմք են հանդիսացել այն ակնարկների համար, թե իբր Գրիգոր Նարեկացին և Վահան Սյունեցին եղել են համախոհներ⁶⁷: Այս մոտեցման ամենավաղ սկզբնաղբյուրը ամենայն հավանականությամբ Ներսես Լամբրոնացին է, որն իր ատենաբանության մեջ հաղորդում է. «ԶԵՂՐԻ Հայրապետին, և զԻՐՈՅ Ժողովոյն զհաւանութիւնն, ԶՎահանայ Հայրապետին զհամաձայնութիւնն առ մեծ եկեղեցին հռոմոց, և զնորին հետևողաց...: Յորոց մի էր և իմն աստուածաշնորհ և յոգունց գերազանց՝ հրեշտակն ի մարմնի Գրիգոր Նարեկացի»⁶⁸: Թե՛ Գրիգոր Նարեկացին, թե՛ Անանիա Մոկացի կաթողիկոսից քանադրված նրա հայր Խոսրով Անձևացին եղել են Հայոց եկեղեցու և նրա դավանաբանության ջատագովը, կողմ էին ուժեղ ու կենսորոնացված թագավորության: Նրանք երկուսն էլ գործնականում ապացուցել են, որ աղանդավորության անհաշտ հակառակորդներ են, իսկ հերձվածողները թյուրում են ուղիղ հավատը և խոչընդոտում ժողովրդի հոգևոր միասնությունը⁶⁹:

⁶⁵ Տե՛ս նույն տեղը, սյունակ 1321-1329:

⁶⁶ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 579:

⁶⁷ Նարեկացու վարքի հեղինակը գրում է, որ Գրիգոր Նարեկացին եղել է Վահանի ժամանակակիցը (**Գղեմես Գալանուս**, նշվ. աշխ., էջ 211: Հմմտ. «Նարեկ. գիրք աղօթից Սբյն Գրիգորի Նարեկացույ Հոգեկիր Հռետորի», Կոստանդնուպոլիս, Յօրթագիւղ, 1832, էջ 345): Մակայն այստեղ կա ժամանակագրական ակնհայտ անհամապատասխանություն: 965-970 թթ. աթոռակալած Վահան Սյունեցուն սխալմամբ հիշատակում են որպես բյուզանդական Վասիլ և Կոստանդին կայսրերի ու Մենեքերիմ Արծրունի թագավորի (1003-1021) ժամանակակից (հմմտ. **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, աշխատասիրության Դ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 171):

⁶⁸ «Տն. Ներսեսի Լամբրոնացույ Տարսոնի եպիսկոպոսի ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք», էջ 157:

⁶⁹ Տե՛ս «Մեկնութիւն ժամանակագրութեան արարեալ երանելոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի», Օրթագիւղ, 1840, էջ 6:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ Հայ եկեղեցում Վահան Սյունեցու նախաձեռնած դավանական նորամուծություններն ու ծիսական փոփոխություններն ունեին քաղկեդոնական բովանդակություն: Հայոց կաթողիկոսի պաշտոնում նրա վարած քաղաքականությունը հետապնդում էր հույն և վրաց քաղկեդոնական եկեղեցիների հետ դավանական միություն հաստատելու նպատակ, որն էլ եղավ նրա աթոռանկության պատճառը: Այդ գործելակերպը Հայոց եկեղեցու և հայ հասարակության կողմից ընկալվում էր իբրև սպառնալիք հայոց դավանանքային ինքնորոշմանը և ազգային միասնությանը: Հայ եկեղեցու ազգային-դավանաբանական քաղաքականությունը ունեցել է հակաքաղկեդոնական ուղղվածություն: Հայ եկեղեցու ավանդապահ հայրերը, վարդապետները քաղկեդոնականությունը որակել են որպես հերձված: Այդ դիրքորոշման շնորհիվ Հայ եկեղեցին կարողացավ յուրահատուկ դիրք գրավել քրիստոնյա աշխարհում: Այն ոչ միայն չէր հակասում ազգային ինքնություն քաղաքականության շահերին, այլև չէր դավաճանում ճշմարիտ վարդապետության ավանդական սկզբունքներին:

Բանալի բառեր – *քաղկեդոնականություն, սրբապատկեր, վրաց եկեղեցի, բյուզանդական եկեղեցի, մեղադրանք, եկեղեցաժողով, ծիսադավանանքային փոփոխություններ, աթոռանկ*

ВАРДАН АЛЕКСАНИЯН – *Армянский католикос Ваан I Сюнеци*. – Годы правления католикоса Ваана I (965–970) отмечены рядом внешних и внутренних вызовов. До избрания католикосом Ваан был главой Сюникской епархии. Как епархиальный предводитель Сюника (959–965) он запомнился благоустройством монастырей и церквей, умелой организацией церковных дел, развитием образовательно-культурных центров. После смерти католикоса Анании Мокаци Ваан возшёл на патриарший престол. По сведениям историков-современников на первом году своего правления новый католикос инициировал обрядовые изменения, по православному примеру ввёл в Армянскую церковь иконы и обязал применять их во время служб, установил добрые отношения с Грузинской и Византийской церквами. Приверженцы духовных традиций обвинили его в склонности к халкедонитству. В 970 г. церковный собор отрешил его от сана, избрав новым католикосом Степаноса III Севанци. Ваан Сюнеци отверг обвинения и нашёл пристанище в Васпуракане. Последствием этого стал раскол и создание второго патриаршего престола. Детальное исследование конфессиональных новаций и обрядовых изменений Ваана Сюнеци убеждает в их халкедонитском характере. Ревнители духовных традиций увидели в тесных связях с имперской православной церковью угрозу национальной и конфессиональной идентичности армян, что и стало причиной его свержения.

Ключевые слова: *халкедонитство, икона, Грузинская церковь, Византийская церковь, обвинения, церковный собор, обрядовые изменения, отрешение от престола.*

VARDAN ALEXANYAN – *Vahan I Syunetsi, Catholicos of Armenians (10th century)*. – The years of reign Armenian Catholicos 10th century Vahan Syunetsi (965-970), were rich in external and internal challenges for Armenia. Before being elected as the Catholicos of Armenia Vahan Syunetsi was the religious leader of Syunik eparchy.

The years of his reign (959-965) as a bishop of Syunik were marked by the improvement of monasteries and churches, the regulation of monastic brethren, the skillful organization of religious and church affairs and the development of educational and cultural centers. After the death of Catholicos Anania Mokatsi in 965 Vahan Syunetsi ascended the Patriarchal throne of Armenia. According to medieval Armenian historiographers, in the first year of his reign, Vahan Syunetsi initiated innovations and ritual changes, introduced icons into the Armenian Church from Georgian church and obliged them to be used during ecclesiastical services. He established good confessional relations with the churches of Georgia and the Byzantine Empire. Scholarly fathers, adherents of the spiritual traditions, accused him of adjoining to Chalcedonite. Ecclesiastical Synod 970 overthrew him from the throne, electing Stepanos III Sevantsi as the new Catholicos. Vahan Syunetsi denied all accusations and found refuge in Vaspurakan. The consequence of this was the split of the Armenian Patriarchal throne and the creation of the opposite throne. A detailed study of the activities of Vahan Syunetsi leads to the conclusion that confessional innovations and ritual changes had Chalcedonite content. He tried to establish warm confessional relations between the Armenian and the imperial churches. But the policy pursued by him met strong opposition in the person of the adherents of the spiritual traditions of the scholarly fathers of the Armenian Church, who assessed the new studies in the Armenian Church as a threat to the national and religious identity of Armenians. The reason for his overthrow of the Patriarchal throne was his policy to unite the Armenian Church with the Georgian and Greek Churches.

Key words: *Chalcedonite, icon, Georgian church, Byzantine church, accusation, Ecclesiastical Synod, ritual changes, overthrew from the throne*

Ներկայացվել է՝ 05.06.2019

Գրախոսվել է՝ 21.06.2019

Ընդունվել է տպագրության՝ 27.06.2019